ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶ ԼՈՒՍԱԳՅՈՒՂԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԻ

ԿԱՐԳԱԴՐՈՒԹՅՈՒՆ

« 22 » մարտի 2016թ. թիվ 06- Ա

ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ ՍՏԵՂԾԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 44-րդ հոդվածի երրորդ մասի 1-ին կետով,

ԿԱՐԳԱԴՐՈՒՄ ԵՄ

1. Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Լուսագյուղի գյուղական համայնքում 2016 թվականի մարտի 17-ից 21-ն ընկած ժամանակահատվածում ցրտահարության հետևանքով գյուղացիական տնտեսություններին պատճառված վնասների չափերն ուսումնասիրելու և արձանագրելու նպատակով ստեղծել հանձնաժողով՝ համաձայն հավելվածի:

2. Հանձնաժողովին (Ա.Սիմոնյան)՝ սույն որոշմամբ նախատեսված աշխատանքներն իրականացնել 10-օրյա ժամկետում, և արդյունքների մասին զեկուցել Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Լուսագյուղի համայնքապետին՝ կազմված ակտերը Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետարան ներկայացնելու համար:

3. Սույն կարգադրությունն ուժի մեջ է մտնում արձակման պահից:

ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏ՝---------- Ս.ԿԱՐԱՊԵՏՅԱՆ

2016 թվականի մարտի «22»
գ. Լուսագյուղ
Ժամը՝ 12 00

Հավելված
Հայաստանի Հանրապետության
Արմավիրի մարզի Լուսագյուղի
գյուղապետի 2016 թվականի
մարտի 22-ի թիվ 06-Ա
կարգադրության

ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ԿԱԶՄ

Հանձնաժողովի նախագահ՝ Արմեն Սիմոնյան - համայնքապետի տեղակալ

անդամներ՝ Արամ Գրիգորյան – ավագանու անդամ
Խաչիկ Տերտերյան - ավագանու անդամ
Գոռ Սարգսյան - ավագանու անդամ